



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

«---» «-----» 2022թ.

N -----

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Փամբուխյան,

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլանը) հաստատելու մասին» N2328-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզպետին վերապահված գործառույթների կատարման վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետին է դիմել «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահը:

ՀՀ կառավարության նշված որոշման 3-րդ կետի պահանջի համաձայն, ինչպես ՀՀ Արագածոտնի մարզպետին, այնպես էլ ՀՀ Արմավիրի մարզպետին հանձնարավել է՝ 6-ամսյա ժամկետում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկ Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում նախահարձակ պաշտպանական միջոցառումների և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում գտնվող համայնքների բնակչությանն անհրաժեշտ թվով անհատական պաշտպանական միջոցներ ձեռք բերելու վերաբերյալ, իսկ 7-րդ կետի


պահանջի համաձայն՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին հանձնարավել է՝ ըստ համապատասխան մարմինների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկների՝ ստեղծել համապատասխան պաշարներ և իրականացնել դրանց ապահովումը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի արխիվում գործին առնչվող փաստաթղթեր չեն հայտնաբերվել, խնդրում եմ Ձեր արխիվում նշված փաստաթղթերի պահպանության դեպքում, որոնք հնարավոր էր, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ներկայացված լինեին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն, մեզ տրամադրել հատկացված հակազազերի և դնչկալների քանակի, ինչպես նաև դրանց տրամադրման և պիտանելիության ժամկետների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

Կից ներկայացնում եմ «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության գրությանը օրինակը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

 Недействительная подпись



VERIFIED OCSP 22.09.2022 16:58:40 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ զորահավաքային նախապատրաստության բաժին
Ա. Լալայան
Հեռ. 0237-2-85-02